ԼՐԱՏՈՒ

ՋԱՆԿԱՌԼՈ ԲՈԼՈՆԻԵԶԻ

2006 թ. հունվարին վախճանվեց իտալացի լեզվաբան, հայագետ–հնդեվրոպաբան, գիտության և բանասիրության Լոմբարդյան և Վիրգիլյան ազգային ակադեմիաների, նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ Ջանկառլո Բոլոնիեզին:

Ծնվել է 1923 թ. հոկտեմբերի 20–ին Միլանում (Իտալիա), ավարտել տեղի կաթոլիկական համալսարանը, պրոֆեսոր էր 1962 թվականից: Զբաղեցրել է գիտական, գիտակազմակերպչական մի շարք պաշտոններ իբրև տնօրեն, նախագահ և այլն:

Զբաղվում էր ընդհանուր լեզվաբանության, հայերենի և իրանական լեզուների, հայերենի և հունարենի փոխհարաբերության, հունարենից կատարված թարգմանությունների բնագրերի ուսումնասիրության, հայերենի վրա իրանական բարբառների ազդեցության, հայոց այբուբենի և հայերենի բառապաշարի քննության հարցերով: Հեղինակ է մի շարք աշխատությունների և գիտական հոդվածների տպագրված իտալերեն և եվրոպական այլ լեզուներով, որոնք կարևոր են հայերենի պատմության և համեմատական ուսումնասիրության, հայերեն բնագրագիտության տեսանկյունից:

Մեծ կարևորություն ունեն «Հայերենի ստուգաբանության և հնչյունաբանության հարցեր» (ռուսերեն, 1986 թ.), «Հունարեն բնագրերի հին հայկական թարգմանությունների նշանակությունն ու արժեքը» (հայերեն, 1979 թ.) աշխատությունները: